

# 1. Ընդհանուր դրույթներ

- 1.1. «Քաղաքացիական գիտակցություն» ազատական հասարակական կազմակերպությունը (այսուհետ՝ Կազմակերպություն) ազատական սկզբունքների հիման վրա, Հայաստանի Հանրապետությունում ժողովրդավարության խթանման ու զարգացման նպատակով ստեղծված հասարակական կազմակերպություն է:
- 1.2. Կազմակերպության հայերեն լրիվ անվանումն է՝ «Քաղաքացիական գիտակցություն» ազատական հասարակական կազմակերպություն:
- 1.3. Կազմակերպության հայերեն կրճատ անվանումն է՝ «ՔԳ» ԱՀԿ:
- 1.4. Կազմակերպության անգլերեն լրիվ անվանումն է՝ “Civil Consciousness” liberal non-governmental organization:
- 1.5. Կազմակերպության ռուսերեն լրիվ անվանումն է՝ “Гражданское сознание” либеральная общественная организация:
- 1.6. Կազմակերպությունը կարող է ունենալ կնիք, որում Կազմակերպության անվանումը գրառված է երեք լեզուներով (հայերեն, անգլերեն, ռուսերեն):
- 1.7. Կազմակերպության գտնվելու վայրն է՝ 0044, Երևան Ավան Դուրյան թ., 462., 29բն, հեռ. +374 10 617133:

# 2. Նպատակները և խնդիրները

- 2.1. Կազմակերպության հիմնական նպատակն է ներկայացնել և պաշտպանել երիտասարդության և ուսանողության իրավունքներն ու շահերը: Կազմակերպության հիմնական խնդիրներն են՝ օրենքով սահմանված կարգով՝
  - նպաստել երիտասարդության սոցիալ տնտեսական, հոգևոր մշակութային խնդիրների լուծմանը,
  - նպաստել ՀՀ տարածքում երիտասարդության և ուսանողության իրավական և քաղաքացիական գիտակցության բարձրացմանն ու զարգացմանը,
  - համախմբել երիտասարդությանը Կազմակերպության նպատակների և ծրագրերի իրականացման շրջանակներում,
  - մարդու իրավունքների, մամուլի և խոսքի ազատության պաշտպանությունը,
  - ՀՀ-ում ժողովրդավարության խթանումն ու զարգացումը:
- 2.2. Կազմակերպության հիմնական խնդիրների իրականացման ձևերն են օրենքով սահմանված կարգով՝
  - ժողովրդավարության արդի չափանիշներին համապատասխանող օրինագծերի մշակում,

- քաղաքագիտական ուսումնական ծրագրերի իրականացում դասընթացների, սեմինարների տեսքով,
- հրատարակչական աշխատանքի իրականացում (այդ թվում՝ համաշխարհային արժեքավոր աշխատությունների հայերեն թարգմանություն),
- վերլուծությունների և հետազոտությունների իրականացում,
- հրապարակային միջոցառումների անցկացում:

### **3. Անդամագրվելու և անդամակցությունից դուրս գալու կարգը**

- 3.1.** Անձը, որը Կազմակերպության հիմնադիր չէ, Կազմակերպության անդամ կարող է դառնալ իր կամքի ազատ արտահայտման հիման վրա՝ սույն կանոնադրությամբ սահմանված կարգով:
- 3.2.** Մինչև տասնչորս տարեկան անչափահասը Կազմակերպությանը կարող է անդամագրվել իր ցանկությամբ՝ օրինական ներկայացուցչի դիմումի հիման վրա:
- 3.3.** Տասնչորսից մինչև տասնութ տարեկան անչափահասը, եթե օրենքով սահմանված կարգով լրիվ գործունակ չի ճանաչված, Կազմակերպությանը կարող է անդամագրվել իր դիմումի հիման վրա՝ օրինական ներկայացուցչի գրավոր համաձայնությամբ:
- 3.4.** Կազմակերպության անդամ կարող են դառնալ Հայաստանի Հանրապետության, ինչպես նաև օտարերկրյա ցանկացած քաղաքացի, որն ընդունում է Կազմակերպության կանոնադրությունը, նրա նպատակներն ու խնդիրները, ցանկանում մասնակցել նրա գործունեությանը, վճարել սահմանված մուտքավճար և մուծում է անդամավճար:
- 3.5.** Անդամագրումն իրականացվում է Կազմակերպության Խորհրդի որոշմամբ՝ անձի համապատասխան դիմումի հիման վրա: Կազմակերպության անդամության մեջ ընդունվելու մասին դիմումի մերժումը գանգատարկման ենթակա չէ:
- 3.6.** Անդամությունը կարող է դադարեցվել դիմումի համաձայն կամ Խորհրդի որոշմամբ:
- 3.7.** Անդամությունը կարող է դադարեցվել Խորհրդի որոշմամբ, եթե Կազմակերպության անդամը թույլ է տվել Կազմակերպության կանոնադրության խախտում կամ Կազմակերպության բարի համբավը արատավորող արարք: Անդամությունը դադարեցնելու մասին Խորհրդի որոշումները պետք է հաստատվեն Կազմակերպության Համաժողովի կողմից:
- 3.8.** Կազմակերպության անդամը, որի մասնակցությունը դադարեցվել է Խորհրդի որոշմամբ, իրավունք ունի մասնակցել Կազմակերպության Համաժողովում իր հարցի քննարկմանը:
- 3.9.** Անդամությունը դադարեցնելու դեպքում մուտքավճարը հետ չի վերադարձվում:

## 4. Անդամների իրավունքները և պարտականությունները

- 4.1. Կազմակերպության անդամն իրավունք ունի՝
- մասնակցել Կազմակերպության Համաժողովի և Խորհրդի նիստերին: Կազմակերպության խորհրդի նիստերին Կազմակերպության անդամը մասնակցում է խորհրդակցական ձայնի իրավունքով,
  - ընտրվել Կազմակերպության ղեկավար մարմիններում, եթե տվյալ պահին լրացել է նրա 18 տարին,
  - Կազմակերպության աշխատանքները բարելավելու նպատակով դիմումներ և առաջարկություններ ներկայացնել Կազմակերպության ղեկավար մարմիններին,
  - ստանալ տեղեկատվություն Կազմակերպության գործունեության մասին,
  - ազատ դուրս գալ Կազմակերպության անդամությունից,
  - ղեկավար մարմինների որոշումները բողոքարկել Կազմակերպության բարձրագույն մարմնին կամ դատարան՝ օրենքով սահմանված կարգով և ժամկետում:
- 4.2. Կազմակերպության անդամը պարտավոր է՝
- ակտիվորեն մասնակցել Կազմակերպության գործունեությանը,
  - միջոցներ ձեռնարկել Կազմակերպության նպատակների և խնդիրների իրականացման համար,
  - ժամանակին վճարել Կազմակերպության Խորհրդի կողմից սահմանված անդամավճարները,
  - կատարել Կազմակերպության կանոնադրության պահանջները, Կազմակերպության մարմինների որոշումները և Կազմակերպության նախագահի հանձնարարականները:

## 5. Կազմակերպության կառուցվածքը, առանձնացված ստորաբաժանումներ ստեղծելու կարգը

- 5.1. Կազմակերպության բարձրագույն մարմինը Կազմակերպության անդամների Համաժողովն է:
- 5.2. Կազմակերպության Խորհուրդը կազմակերպության ղեկավար մարմինն է:
- 5.3. Կազմակերպության նախագահը միաժամանակ հանդիսանում է Կազմակերպության Խորհրդի նախագահ:
- 5.4. Այլ պետություններում Կազմակերպության առանձնացված ստորաբաժանումներ ստեղծվում են տվյալ պետության օրենսդրությանը համապատասխան:

- 5.5. Այլ պետություններում Կազմակերպության առանձնացված ստորաբաժանումներ ստեղծելու իրավունք ունի Կազմակերպության Խորհուրդը, որն էլ հաստատում է նրանց կանոնադրությունները:

## **6. Կազմակերպության գործունեության տարածքը**

- 6.1. Կազմակերպությունը գործում է ՀՀ ողջ տարածքում:
- 6.2. Կազմակերպությունը կարող է անդամակցել միջազգային հասարակական կազմակերպությունների, ունենալ միջազգային կապեր, կնքել համաձայնագրեր ոչ առևտրային և ոչ կառավարական կազմակերպությունների հետ:

## **7. Կազմակերպության բարձրագույն մարմնի հրավիրման կարգը և ժամկետները, իրավագործությունը և որոշումների ընդունման կարգը**

- 7.1. Կազմակերպության Համաժողովին է վերապահվում Կազմակերպության կառավարման և գործունեության ցանկացած հարցի վերջնական լուծումը:
- 7.2. Կազմակերպության Համաժողովը հրավիրվում է Խորհրդի կողմից երկու տարին մեկ անգամ:
- 7.3. Համաժողովի անցկացման կարգն ու ժամկետները որոշում է Խորհուրդը:
- 7.4. Եթե Կազմակերպության անդամների թվաքանակն անցնում է հարյուրից, ապա Խորհրդի կողմից սահմանված կարգով Համաժողովին կարող են մասնակցել անդամների կողմից ընտրված ներկայացուցչական պատվիրակները:
- 7.5. Կազմակերպության արտահերթ համաժողով կարող է հրավիրվել՝
- Կազմակերպության անդամների 1/3-ի պատճառաբանված պահանջի դեպքում ոչ ուշ, քան 14 օրացուցային օրվա ընթացքում պահանջող կողմի հաստատած օրակարգով՝ Խորհրդի կողմից:
- 7.6. Կազմակերպության Համաժողովի բացառիկ իրավասությանն են վերապահվում՝
- Կազմակերպության կանոնադրության հաստատումը, նրանում փոփոխություններ և (կամ) լրացումներ կատարելը, նոր կանոնադրության հաստատումը,
  - Կազմակերպության անդամների թվից Կազմակերպության Խորհրդի թվակազմի որոշումը, անդամների ընտրությունը և կազմի փոփոխումը, լիազորությունների վաղաժամկետ դադարեցումը,

- Կազմակերպության նախագահի ընտրությունը, լիազորությունների վաղաժամկետ դադարեցումը և պաշտոնավարման ժամկետի սահմանումը,
  - Կազմակերպության աշխատակազմի հաստիքացուցակի հաստատումը,
  - Կազմակերպության բյուջեի հաստատումը,
  - Կազմակերպության վերակազմակերպումն ու լուծարումը, գույքի փոխանցման ակտի կամ բաժանիչ հաշվեկշռի հաստատումը, բացի դատարանի վճռով վերակազմակերպումից,
  - Կազմակերպության գործունեության և գույքի օգտագործման հաշվետվությունների հաստատումը,
  - Կազմակերպության գործունեության ու կառավարման ֆինանսական վերահսկողությունը,
- 7.7. Կազմակերպության Համաժողովն իրավագոր է, եթե համաժողովին մասնակցում է Կազմակերպության բոլոր անդամների կամ բոլոր պատվիրակների ընդհանուր թվի կեսից ավելին:
- 7.8. Կազմակերպության Համաժողովի բացառիկ իրավասության հարցերի վերաբերյալ որոշումներն ընդունվում են, եթե կողմ են քվեարկել Կազմակերպության բոլոր անդամների կամ բոլոր պատվիրակների թվի կեսից ավելին, եթե օրենքով կամ սույն Կանոնադրությամբ տվյալ որոշման ընդունման համար նախատեսված չէ ձայների ավելի մեծ քանակ: Մնացած հարցերով որոշումներ ընդունվում են Համաժողովին ներկա անդամների կամ պատվիրակների ձայների պարզ մեծամասնությամբ:
- 7.9. Կազմակերպության Համաժողովի ընթացքի արձանագրման փաստաթղթերը պահպանվում են ոչ պակաս, քան հինգ տարի:

## **8. Կազմակերպության ղեկավար մարմինների իրավասությունը, ընտրության կարգը, լիազորությունների ժամկետը և որոշումների ընդունման կարգը**

- 8.1. Կազմակերպության Խորհուրդը Կազմակերպության գործադիր մարմինն է. Խորհուրդն ընտրվում է Համաժողովի կողմից 2 տարի ժամկետով:
- 8.2. Խորհուրդն իր աշխատանքներն իրականացնում է նիստերի ձևով, որոնք հրավիրվում են Կազմակերպության նախագահի կողմից ոչ ուշ, քան վեց ամիսը մեկ անգամ: Նիստ կարող է հրավիրվել նաև Կազմակերպության անդամների մեկ հինգերորդի կամ Խորհրդի երկու անդամների պահանջով:
- 8.3. Կազմակերպության խորհուրդը՝
- հաստատում է Կազմակերպության նախագահի հաշվետվությունները, այդ թվում՝ Համաժողովին ներկայացվող հաշվետվությունը,

- առաջարկություններ է ներկայացնում Համաժողովին՝ նրա բացառիկ իրավասությանը վերաբերող հարցերի վերաբերյալ,
- ընդունում է Կազմակերպության անդամ և ազատում կամ զրկում է անդամությունից,
- Կազմակերպության անդամների նկատմամբ կիրառում է խրախուսանքներ և տույժի միջոցներ,
- ղեկավարում է Կազմակերպության գործունեությունը Համաժողովների միջև ընկած ժամանակահատվածում,
- սահմանում է Կազմակերպության անդամների կողմից մուտքի վճարի և անդամավճարի մուծման կարգը, չափերը և ձևերը,
- ձեռք է բերում, տիրապետում, օգտագործում, տնօրինում, օտարում և դուրս գրում Կազմակերպության գույքը՝ անկախ տեսակներից և չափերից,
- ստեղծում և լուծարում է Կազմակերպության հիմնարկները, կառուցվածքային ստորաբաժանումները, առանձնացված ստորաբաժանումները (մասնաճյուղեր, ներկայացուցչություններ), տնտեսական ընկերությունները, ինչպես նաև հաստատում է նրանց կանոնադրությունները,
- կազմում և Համաժողովի հաստատմանն է ներկայացնում Կազմակերպության աշխատակազմի հաստիքացուցակը,
- հաստիքացուցակի համաձայն սահմանում է աշխատողների վարձատրության կարգն ու չափերը,
- հաստատում է Կազմակերպության հաշվապահական հաշվառման հաշվետվությունները,
- իրավունք ունի քննարկել և լուծել Կազմակերպության կառավարմանն ու գործունեությանը վերաբերող ցանկացած հարց, բացառությամբ Կազմակերպության Համաժողովի բացառիկ իրավասությանը և նախագահի իրավասությանը վերապահվածներից:

- 8.4.** Խորհուրդը կարող է հարցեր քննարկել և որոշումներ կայացնել, եթե Խորհրդի նիստին մասնակցում են իր անդամների երկու երրորդից ավելին:
- 8.5.** Եթե Խորհրդի կազմը՝ նրա անդամների դուրս գալու կամ այլ պատճառներով պակաս է Համաժողովի կողմից սահմանված թվի երկու երրորդից, ապա հրավիրվում է արտահերթ Համաժողով կազմի համալրման կամ նոր կազմի ընտրության հարցով:
- 8.6.** Կազմակերպության Խորհրդի որոշումներն ընդունվում են Խորհրդի անդամների ընդհանուր թվի ձայների պարզ մեծամասնությամբ: Ձայների հավասարության դեպքում նախագահի (նրա բացակայության դեպքում՝ նիստը վարողի) ձայնը վճռորոշ է:
- 8.7.** Կազմակերպության նախագահն ընտրվում է Համաժողովի կողմից 2 տարի ժամկետով սույն կանոնադրությամբ սահմանված կարգով:

- 8.8.** Կազմակերպության նախագահ կարող է ընտրվել 18 տարին լրացած անձն, ով այս պաշտոնում առաջադրվելիս նվազագույնը 2 տարի եղել է Կազմակերպության անդամ, ինչպես նաև առնվազն մեկ անգամ ընտրված է եղել Կազմակերպության Խորհրդի կազմում:
- 8.9.** Կազմակերպության Խորհրդի անդամ կարող է ընտրվել 18 տարին լրացած անձն, ով այս պաշտոնում առաջադրվելիս նվազագույնը 1 տարի եղել է Կազմակերպության գրանցված անդամ:
- 8.10.** Կազմակերպության նախագահը՝
- ղեկավարում է Կազմակերպության Համաժողովի և Խորհրդի աշխատանքները, ինչպես նաև հանդիսանում է Կազմակերպության ղեկավար մարմինը՝ Կազմակերպության Խորհրդի նիստերի միջև ընկած ժամանակահատվածում,
  - սույն կանոնադրությամբ սահմանված ժամկետներում և դեպքերում հրավիրում և վարում է Համաժողովի նիստերը, հրավիրում և վարում է Կազմակերպության Խորհրդի նիստերը,
  - ներկայացնում է Կազմակերպությունը ՀՀ պետական մարմիններում, տեղական և միջազգային հասարակական կազմակերպությունների համաժողովներում և պաշտոնական հանդիպումներում,
  - Կազմակերպության անունից վարում է բանակցություններ, կնքում պայմանագրեր,
  - կատարման համար պարտադիր հանձնարարականներ է տալիս Կազմակերպության անդամներին,
  - միջոցներ է ձեռնարկում Կազմակերպության, նրա անդամների ներդաշնակ և արդյունավետ գործունեության ուղղությամբ,
  - պաշտոնավարման ողջ ընթացքում Կազմակերպության անունից հանդես է գալիս առանց լիազորագրի,
  - բանկային հիմնարկներում բացում է հաշվարկային և այլ հաշիվներ,
  - Կազմակերպության նախագահը հաշվետու է Կազմակերպության Խորհրդին և Համաժողովին,
  - որոշումներ է կայացնում միանձնյա
- 8.11.** Կազմակերպության անդամների մեկ երրորդի գրավոր պահանջով կարող է հրավիրվել արտահերթ Համաժողով՝ Կազմակերպության նախագահին հետ կանչելու օրակարգով:

## **9. Սեփականության գոյացման աղբյուրներ**

- 9.1.** Կազմակերպության սեփականությունը գոյանում է՝
- մուտքի վճարներից,
  - անդամավճարներից,
  - հանգանակություններից, նվիրատվություններից,

- դրամաշնորհներից,
  - Կազմակերպության կողմից հիմնադրված տնտեսական ընկերությունների գործունեությունից,
  - ՀՀ օրենսդրությամբ չարգելված այլ աղբյուրներից:
- 9.2. Կազմակերպության միջոցները տնօրինում է Կազմակերպության Խորհուրդը:
- 9.3. Կազմակերպության միջոցների տնօրինման վերահսկողությունը իրականացնում է Կազմակերպության Համաժողովը:
- 9.4. Կազմակերպության միջոցները կարող են օգտագործվել միայն Կազմակերպության կանոնադրական նպատակների և խնդիրների իրագործման համար:

## **10. Վերակազմակերպման և լուծարման կարգը**

- 10.1. Կազմակերպության վերակազմակերպումն իրականացվում է Կազմակերպության Համաժողովի կամ դատարանի որոշմամբ:
- 10.2. Կազմակերպությունը կարող է լուծարվել Համաժողովի կամ դատարանի որոշմամբ:
- 10.3. Համաժողովի որոշմամբ Կազմակերպությունը կարող է լուծարվել Կազմակերպության անդամների ձայների պարզ մեծամասնությամբ:
- 10.4. Կազմակերպության գործունեության կասեցումը և Կազմակերպության լուծարումը կատարվում են օրենքով սահմանված դեպքերում և կարգով:
- 10.5. Կազմակերպության լուծարման դեպքում ՀՀ Արդարադատության նախարարության համաձայնությամբ Կազմակերպության Համաժողովի կողմից սահմանված կարգով կազմվում է լուծարային հանձնաժողով, սահմանվում Կազմակերպության լուծարման ընթացակարգը և ժամանակացանկը:
- 10.6. Կազմակերպության լուծարման դեպքում պարտատերերի պահանջներն օրենքով սահմանված կարգով բավարարելուց հետո մնացած միջոցներն ուղղվում են Կազմակերպության կանոնադրական նպատակների և խնդիրների իրականացմանը, իսկ եթե դա հնարավոր չէ՝ փոխանցվում են պետական բյուջե: